

## Կ Ա Ր Ծ Ի Ք

**Նարե Կայծերի Հակոբյանի «Տեղեկատվական և խոսքարկման գործառույթների հարաբերակցությունը անգլերեն գիտական դիսկուրսում»  
Ժ. 02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ**

Այսօր ժամանակակից լեզվաբանության առավել արդիական հիմնախնդիրներից է լեզվի հաղորդակցական և գործաբանական առանձնահատկությունների հատկորոշումը, հատկապես եթե այն դուրս է գալիս ինստիտուցիոնալ դիսկուրսի հարթակ և ուսումնասիրության առարկա դարձնում լեզվանյութի վերծանումը համապատասխան մշակութային և սոցիալական միջավայրում: Այս պարագայում հատկապես կարևորվում է խոսքաստեղծ և խոսքընկալման ողջ գործընթացը, քանի որ խոսքն ինքնին դառնում է հասարակական գործունեության և համագործակցության միջոց: Այդ իսկ պատճառով ինստիտուցիոնալ դիսկուրսի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է, երբ տեղափոխվում է խոսքաստեղծման ու խոսքըմբռնման գործունեության ձևավորման հարթակ և վերլուծության առարկա դարձնում դրա ներ- և արտալեզվական դրսևորումների համակցությունը: Ահա թե ինչու, երբ անհատի խոսքը դիտարկվում է որպես նրա հանրութային գործունեության դրսեվորման ձև, ուսումնասիրության առարկա է դառնում նաև ամբողջական խոսույթը իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ, որոնք տեղավորվում են հետևյալ բանաձևային կաղապարում. արտալեզվական լայն համատեքստ (այսինքն՝ սոցիալմշակութային միջավայր), խոսող (այսինքն՝ խոսքաստեղծ անհատ), խոսք (այսինքն՝ ներազդեծության միջոց) և վերջապես հասցեատեր (այսինքն՝ հետադարձ կապ):

Հրապարակային պաշտպանության ներկայացված՝ Նարե Կայծերի Հակոբյանի «Տեղեկատվական և խոսքարկման գործառույթների հարաբերակցությունը անգլերեն գիտական դիսկուրսում» թեմայով

ատենախոսության շրջանակներում սոցիալմշակութային միջավայրը՝ գիտակրթական ողջ համակարգն է, որը նոր պայմաններում վերածնամբարվում է ժամանակակից մարտահրավերներին և պահանջներին ընդառաջ: Մասնագետների և ուսումնառողների շարժունության մերօրյա մեծ աճն արդյունքում անհրաժեշտ է դարձնում գիտակրթական դիսկուրսի մատուցումն ու ընկալումը հեշտացնող միջոցների ուսումնասիրությունը՝ հատկապես ինտերակտիվ համագործակցության պայմաններում: Սրանով է պայմանավորված տվյալ հետազոտության արդիականությունը՝ գիտակրթական դիսկուրսի խոսքաստեղծման և խոսքըմբռնման գործընթացի վերաիմաստավորումը հաղորդակցական մեխանիզմների կիրառման դիտանկյունից՝ այն առավել արդյունավետ ու ընկալելի դարձնելու խոսքարկման և տեղեկատվական գործառույթների փոխկապակցվածության համատեքստում:

Թողնելով աշխատանքի բովանդակությունը գլուխ առ գլուխ ներկայացնելու իրավունքը ատենախոսին՝ ես կփորձեմ լուսաբանել նրա կարևորությունն ու նշանակությունը մեր իրականության համար:

Ժամանակակից պայմաններում ցանկացած ինստիտուցիոնալ դիսկուրսի հիմնական նպատակը, ինչպես արդարացիորեն նշում է ատենախոսը, տեղեկատվության հաղորդումն է և դրանից անմիջապես բխող խոսքարկման գործընթացը: Ահա թե ինչու ձևակերպելիս հետազոտության նպատակը, ատենախոսը քննարկման հարթակ է հանում խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցումը և այդ իսկ փոխհարաբերակցության արդյունքում ձևավորված ժանրաստեղծ հատկանիշները: Ուսումնասիրության առարկա դարձնելով լեզվական այն միավորները, որոնք անմիջականորեն առնչվում են գիտակրթական դիսկուրսի ժանրային հատկանիշների ձևավորման հետ, ատենախոսը հաջողությամբ կարողանում է հատկորոշել դրանց հաղորդակցական ու գործաբանական գործառույթները դիսկուրսի կոնտենտ (այսինքն՝ ներ- և արտալեզվական բովանդակության) վերլուծության դիտանկյունից: Այս

համատեքստում հեղինակը շատ է կարևորում նաև ոչ վերբալ միջոցների դերը, քանի որ դրանց շնորհիվ է որ խոսքը դառնում է առավել ընկալելի ու համոզիչ թիրախ հասցեատիրոջ համար:

Տպավորիչ է վերլուծության ենթարկված փաստացի նյութի ծավալը՝ 70 դասախոսությունից և 26 գիտական հոդվածից քաղված թվով 6685 հարցական նախադասությունների օրինակներ: Հաճախ ասում են, որ քանակը միշտ չէ ապահովում որակ: Սակայն տվյալ դեպքում հենց այս քանակն է, որ տալիս է որակյալ արդյունք և հնարավորություն ընձեռում նորովի գնահատելու խոսքաստեղծման ու խոսքընկալման ներքին մեխանիզմները ու որոշարկելու խոսքարկման գործառույթի դերն անգլերեն գիտական դիսկուրսի կազմավորման գործում:

Տպավորիչ են նաև աշխատանքի ներսում տեղ գտած գծապատկերները, որոնք ատենախոսության եզրահանգումները դարձնում են է՛լ ավելի համակարգված և հիմնավորված:

Հատկապես ուզում եմ նշել հետազոտության գործնական նշանակությունը, քանի որ գիտակրթական դիսկուրսի ձևավորման հասցեատերակենտրոն առանձնահատկությունների արժևորումն ու ուսումնասիրության նոր մոտեցումն արդյունքում կնպաստի ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի գործածության գործընթացում՝ անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, անգլերեն լեզվով դասախոսություններ և գիտական թեմաներով ելույթներ պատրաստելիս, այսինքն զարկ կտան գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ ձևակերպման հմտությունների զարգացմանը:

Ատենախոսության թե՛ տեսական, և թե՛ գործնական նյութի մանրազնին ու բարեխղճորեն կատարված վերլուծությունը հավաստում է հեղինակի գիտական ներուժի, հետազոտական իրազեկության և ինքնուրույնության մասին:

Աշխատանքում հստակ ձևակերպված են հետազոտության արդիականությունը, գիտական նորույթը, տեսական արժեքը, գործնական նշանակությունն ու կիրառման ոլորտները, հետազոտության առարկան ու օբյեկտը: Ատենախոսության կառուցվածքը, գլուխների և ենթագլուխների դասավորությունն ու հաջորդականությունը միանգամայն հիմնավորված են և ապահովում են ողջ հետազոտության ճշգրիտ ու տրամաբանական զարգացումը: Ատենախոսությունը գրված է անգլերեն՝ գրագետ, մատչելի և հասցեատիրոջ համար ընկալելի լեզվով:

Եվ այսպես, գործ ունենք հասուն, արդիական, ժամանակին համահունչ, գիտական մեծ հետաքրքրություն ներկայացնող մի աշխատանքի հետ, որի արդյունքները կարելի է համարել օգտակար ներդրում ոչ միայն հաղորդակցական ու գործաբանական լեզվաբանության, այլև մարդկային փոխհարաբերությունների և գիտակրթական հաղորդակցության ճշգրիտ ձևավորման ոլորտներում:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը, այնուամենայնիվ կցանկանայի ատենախոսի ուշադրությունը հրավիրել մի շարք դիտարկումների, աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Եվ այսպես, փորձեմ մի շարք խմբագրական դիտարկումներ ներկայացնել անգլերեն գրված ատենախոսության և սեղմագրի հայերեն լեզվով վերարտադրված նյութի որոշ անհամապատասխանությունների համեմատական մեկնությունից:

- Առաջին դիտարկումը վերաբերում է ատենախոսության վերնագրին: Անգլերենում **academic discourse** եզրը իր իմաստով փոքր ինչ տարբերվում է հայերեն **գիտական դիսկուրս** եզրից: Այն ավելի լայն բովանդակություն և կիրառություն ունի: Այդ իսկ պատճառով իմ ողջ ելույթի ընթացքում ես օգտագործել եմ **գիտակրթական դիսկուրս**, առավելևս որ ուսումնասիրությունը կատարվել է հենց այս ոլորտի համատեքստում և անգլերեն տարբերակը շատ ավելի լիարժեք է

արտացոլում աշխատանքի բովանդակությունն ու ինչու չէ՛ նշանակությունը: Ի դեպ հայերեն կարելի էր միանգամայն հիմնավորված օգտագործել նաև «ակադեմիական դիսկուրս» եզրը:

- Հաջորդ դիտարկումը վերաբերում է աշխատանքի նպատակի ձևակերպմանը անգլերենում և հայերենում: Այս դեպքում հայերեն տարբերակը շատ ավելի հաջողված է, քանի որ հստակ և գիտական դիսկուրսին հարիր կերպով է ներկայացված: Ընդունելով այն փաստը, որ անգլալեզու տեքստերը բնութագրվում են լակոնիկ և/կամ սեղմ շարադրանքի չափանիշներով, այնուամենայնիվ փորձեմ արձանագրել, որ սեղմագրում հայերեն ներկայացված ձևակերպումը լիարժեք արտացոլում է ներկայացված հետազոտության նպատակը:
- Փորձեմ առարկել սեղմագրում տեղ գտած **հիմնախնդիրներ** եզրի կիրառությանը՝ «Սույն նպատակի իրագործման համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ **հիմնախնդիրները**» նախադասությունում: Անգլերեն **objectives** եզրույթի համարժեքը հայերենում, հատկապես այս համատեքստում **խնդիրներ** եզրն է: Իսկ հետազոտության հիմնախնդիրը շատ ավելի լայն և իմաստավորված է՝ խոսքարկման և տեղեկատվական գործառույթների հարաբերակցությունը անգլալեզու գիտակրթական դիսկուրսի տիրույթում:
- Ինչ վերաբերում է եզրակացություն բաժնին, ապա անգլերեն տարբերակում այն շարադրված է հստակ և համակարգված ներկայացնում է հետազոտության բոլոր եզրահանգումները: Բնականաբար սեղմագրում եզրակացությունը պետք է լինի ավելի համառոտ, սակայն ատենախոսն այդ պահանջին հետևելով, այս բաժինը շարադրելիս չափից շատ է կրճատել հարա- և արտալեզվական հատկանիշներին վերաբերող կետը, հատկանիշներ,

որոնք սակավ դեր չեն կատարում հատկապես դասախոսությունների ընթացքում խոսքի հեղինակ – թիրախ հասցեատեր ակադեմիական փոխհարաբերությունների ձևավորման գործում:

- Եվ վերջապես երկու հարց, որոնց ատենախոսությունն ընթերցելիս չստացա լիարժեք պատասխան.

⇒ Ինչու՞ են հետազոտության համար ընտրված հենց բնագիտական ոլորտի (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա) դասախոսություններ և գիտական հոդվածներ: Ասեմ, որ ուսումնասիրության առարկա դարձած հարց/նախադասություն միավորները ոչ պակաս (երբեմն էլ ավելի) կարևորություն են ստանում հումանիտար գիտությունների թե՛ կրթական և թե՛ գիտական համատեքստում:

⇒ Ատենախոսության էջ 73-ում հեղինակը՝ քննարկելիս խոսքարկային արտահայտություն համարվող հարցերը, այնուամենայնիվ չի հստակեցնում ֆիքսված և ոչ ֆիքսված հարցական նախադասությունների բնութագրիչները: Կարծում եմ, վերլուծությունն ավելի հիմնավորված կլիներ, եթե ներկայացված լինեին դրանց տարբերակման չափանիշները:

Ինչպես տեսնում եք, բոլոր հարցադրումները զուտ խմբագրական և խորհրդատվական բնույթ են կրում և բնավ չեն նսեմացնում ատենախոսության հատկապես գործնական արժեքն ու նշանակությունը:

Աշխատանքը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հոդվածներն ու սեղմագիրը արտացոլում են նրա հիմնական բովանդակությունը:

Ասվածը հիմք է տալիս ինձ միջնորդել գիտական աստիճան շնորհող 009 մասնագիտական խորհրդի առջև Նարե Կայծերի Հակոբյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ.02.07 (Ռոմանագերմանական լեզուներ) մասնագիտության գծով:

15.06.2022


**Գ.Ռ.Գասպարյան**

**բ.գ.դ., պրոֆեսոր**

Հաստատում եմ բ.գ.դ., պրոֆեսոր

Գ.Ռ.Գասպարյանի ստորագրությունը

**ԲՊՀ գիտքարտուղար**



**Հ.Փիլավջյան**